

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավլաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սոցիալական պաշտպանության ոլորտում որոշ պետական ծախսերի ինդեքսավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարկ ենք համարում հայտնել, որ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի սոցիալական պաշտպանության ընդհանուր ծախսերը 2008 թվականի համեմատ աճել են 15,1 տոկոսով՝ 219,2 մլրդ դրամից դառնալով 252,4 մլրդ դրամ: Մասնավորապես՝

- 1) կենսաթոշակների մասով ավելացել է 13,3 տոկոսով (ապահովագրական կենսաթոշակի չափը՝ 17,6 տոկոսով).
- 2) գործազրկության նպաստի մասով՝ 20 տոկոսով.

3) բոլոր տեսակի պետական նպաստների մասով՝ **18,2** տոկոսով, ընդ որում, ավելացված ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվել են երեխաներին կամ երեխանունեցող ընտանիքներին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված խումբը տնտեսական ճգնաժամի պայմաններում առավել խոցելի է (մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը բարձրացել է **6** անգամ, երեխայի ծննդյան նպաստը բարձրացել է շուրջ **42** տոկոսով, տարբերակվել են դրանց չափերը, ընդ որում, ընտանիքում ծնված երրորդ կամ դրան հաջորդող յուրաքանչյուր երեխայի համար նպաստի չափը սահմանվել է **430** հազ. դրամ):

Բնակչության կենսամակարդակի վրա տնտեսական ճգնաժամի իրական ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել բազմակողմանի խորն ուսումնասիրություններ և վերլուծություններ, որոնք հնարավորություն կտան որոշելու աշխատանքի շուկայի փոփոխությունները, տնտեսական ճգնաժամի ազդեցությունը բնակչության տարբեր խավերի վրա, կանխատեսելու աղքատության մակարդակի հնարավոր փոփոխությունների դինամիկան: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներքին ռեսուրսների և միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ձեռնարկել է միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան տնտեսական ճգնաժամի պայմաններում իրականացվելիք քայլերը դարձնել առավել հստակ և նպատակային:

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի ընդունումից:

Նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության **75**-րդ հոդվածի համաձայն պետք է ընդունվի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար նախարար Արսեն Համբարձումյանը:

Պ-562 -12.03.2009-ՖՎ-010/0

ՆԱԽԱԳԻՃ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՐՈՇ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱԽՍԵՐԻ ԻՆԴԵՔՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով հաստատված սոցիալական պաշտպանության ծախսերը՝ կենսաթոշակներ, քնտանեկան նպաստներ, գործազրկության նպաստներ, վատաբողջության և անաշխատունակության նպաստներ, միանվագ դրամական օգնություն, բնակարանային ապահովում, սոցիալական հատուկ արտոնություններ և սոցիալական պաշտպանության այլ օժանդակություն ենթական են պարտադիր ինդեքսավորման՝ այդ ծախսերից յուրաքանչյուրի առնվազն 20 տոկոսի չափով»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թ. հունիսի 1-ից

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՐՈՇ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՆԴԵՔՍԱՎՈՐՄԱՆ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Ֆինանսատնտեսական ճգնաժամի, դրամ-դոլար փոխարժեքի փոփոխման, գազի, էլեկտրոէներգիայի և ջրի սկզբների բարձրացման հետևանքով հանրապետությունում վերջին շրջանում արձանագրվել է մասնավորապես առաջին անհրաժեշտության բազմաթիվ ապրանքների գների բարձրացում միջինը 20 տոկոսի չափով, բնակչության գնողունակության անկում և դրանով իսկ պայմանավորված սոցիալական վիճակի զգալի վատթարացում: Ներկայացված նախագիծը նպատակ է հետապնդում մեղմել ստեղծված իրավիճակի բացասական ազդեցությունը բնակչության սոցիալապես անապահով հատվածի վրա:

Օրինագծով նախատեսված միջոցառումների Ֆինանսավորման համար անհրաժեշտ քյուջետային եկամուտները մասնավորապես հնարավոր է ապահովել խոշոր բիզնեսի հարկային դաշտ տեղափոխման և ստվերային տնտեսության կրճատման հաշվին, որի անհրաժեշտությունն ի դեպ բազմիցս նշվել է ՀՀ վարչապետի հրապարակային ելույթներում: Համապատասխան իմանական աղբյուր կարող է հանդիսանալ նաև պետական ապարատի և կենտրոնական բանկի վարչական ծախսերի կրճատումը: